

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱԿԱԿՆԵՐԻ  
ՄԱՐՏԻԿԱՆ ՄԻՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ԱՎԱԴ ԼԵՅՏԵՆԱՆՏ  
ՊԱՏՐԻԿ  
ԳԱԶԱԳՅԱՆ



ՍՍՌՄ ԳԵՂԱՔ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ



9 (17) - 90 4968

4-73' Чимчуринск, Иркут.

Чимчуринский район  
Чимчуринский район

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱԿԱԿՆԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՍԻՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3(47)27

Ապր. 73  
Լուս.

Ա.Ս. ԱՍԱՏՐՅԱՆ

Օ (47.925)27

ԱՑՈՒԹՎԱԾ է 1961 թ.

355.334

ԱՎԱԳ ԼԵՅՏԵՆԱՆՏ

ՊԱՏՐԻԿ ԳԱԶԱԳՅԱՆ

A 6252 4968

ՍՈՒՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ  
ԵՐԵՎԱՆ

1 9 4 3

**Սերիա՝ խմբագրությամբ ակադ. Հ. ՕՐԲԵԼԻՆԻ**

**Շապիկը՝ նկարիչ Մ. Կ. ՄՈԽԻԴ**



**ՍԵՐԻԱ՝ ԽԱՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ակադ. Հ. ՕՐԲԵԼԻՆԻ**

**Շապիկը՝ նկարիչ Մ. Կ. ՄՈՒՆԻ**

«Ես ոչ մի ցանկություն չունեմ  
այլքս, բացի կովելուց և թշնամուն  
հաղթելուց»:

... Հաղթանակ ամեն գործում և  
ամենուրեք—դա կատարյալ երջանկու-  
թյուն է:

... Հոգ չէ մեռներ միայն թե  
հաղթել»:

Պատրիկ Գագագյանի օրագրից, 1941 թ.

Հայրենական պատերազմի ահեղ ճակա-  
տամարտերում, հիտերյան երկոտանի գա-  
ղանների դեմ մղվող այս մեծ կովի բո-  
ցերի մեջ, սովետական բազմազգ ժողովրդի  
հայրենասեր զավակները հենց սկզբից  
ցույց տվին խիզախության, քաջության,  
արիության հրաշքներ։

Իրենց անձնազոհ հայրենասիրական  
սխրագործություններով աչքի ընկան և  
սովետական կառավարության կողմից  
բարձր պարգևի արժանացան ամենից ա-  
ռաջ օդաչուները՝ Սոցիալիստական Հայրե-  
նիքի ստալինյան բազեները։

«Պրավդա»-ի 1941 թ. հուլիսի 9-ի համարում հրապարակված Գերազույն Սովետի Նախագահության 1941 թ. հուլիսի 8-ի Հրամանագիրը վկայում է, որ ստալինյան բազեների այդ հերոսական խմբի մեջ է նաև հայ ժողովրդի թեավոր զավակներից մեկը՝ Էսկադրիլիայի հրամանատարի տեղակալ, ավագ լեյտենանտ Պատրիկ Հովհաննեսի Գաղաղյանը, պարզեատրված Կարմիր Դրոշի շքանշանով։

Այսպիսով, սովետական ժողովուրդների ազատագրական մեծ պատերազմում հայ ժողովրդի մարտական մասնակցությունն առաջին անգամ նշանավորվեց օդաչու Պատրիկ Գաղաղյանին տրված բարձր պարգևով։

Ահա թե ինչու խիզախ օդաչուի հերոսական սխրագործության համբավն ազգային արժանապատվության զգացմունքի նոր ալիք բարձրացրեց մեր ժողովրդի սրտում, ոգեսրությամբ համակեց հայրենախոս բանաստեղծներին, որոնք իրենց ժողովրդի հպարտության ու պարծանքի զգացմունքն

արտահայտեցին նրան նվիրված բանաս-  
տեղծություններով:

Ահա Նախրի Զարյանի «Պարծանք» վեր-  
նագորով բանաստեղծությունը՝ գրված բար-  
ձըր պաֆոսով ու ջերմ խանդավառությամբ.

Հասավ մեզ կայծակի արագությամբ  
Խիղախ ճախրումներիդ համբավը մեծ,  
Շողաց Արարատի կատարն անամալ—  
Եվ սիրտս պարծանքով թևավորվեց:

Տարել ես դու զայրույթը մեր սրտի,  
Դյուցազնությունը հին մեր Սասնա տան  
Զուլել սովետական ժողովրդի  
Վիշապաքաղ բազկի հերոսության:

Ճախրի՛ր, ջարդի՛ր, դու մեր ցասման զավակ,  
Արյունառուշտ մըռութը հիտլերի,  
Նա երազում է նոր հարկահավաք,  
Մորա-Մելիքն է նա մեր օրերի:

Կխորտակվի Մորա-Մելիքը նոր,  
Թեկուղ գլխին միլիոն ջաղացաքար,  
Քանի որ քեզ նման ունենք զինվոր  
Ու Ստալինի բազուկն է զորավար:

\* \* \*

Գաղաղյանը ծնվել է առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին՝ 1913 թվին, Նիկոմիդիայում։ Հինգ տարեկան էր Պատրիկը, երբ մեռնում է մայրը։ Հետո հայրը նորից ամուսնանում է և ընտանիքով տեղափոխվում Արարիա, ուր փոքրիկ Պատրիկը կորցնում է ծնողներին և մի կերպ ընկնում կորփու կոչված կղզու (Հունական կղզի Միջերկրական ծովում) նույնանուն քաղաքի ամերիկյան որբանոցը։

1918 թվին հայր ու որդի գտնում են իրար Սիրիայում։ Իսկ մի քանի տարի հետո՝ լավ լուրեր լսելով Սովետական Հայաստանի մասին, Գաղաղյանները վճռում են թողնել հայրենազուրկ կյանքը կապիտալիստական աշխարհում և գալ ու հաստատվել այստեղ՝ Սովետական Հայրենիքում։

Այդ 1925 թվականին էր։

Այստեղ Գաղաղյանների համար սկըսվում է կյանքի նոր շրջան։ Պատրիկի

առաջ բացվում է ուսման ու առաջադիմության լայն ասպարեզ:

Մի առժամանակ Երևանում մնալուց հետո, Գաղաղյանների ընտանիքը տեղափոխվում է Նախիջևան: Այստեղ Պատրիկը սովորում և ավարտում է տրակտորիստների կուրսերը և որպես տրակտորիստ աշխատում մինչև 1930 թվականը:

Բայց նա չի սահմանափակվում կուրսերում ստացած իր համեստ գիտելիքներով, հետաքրքրվում է մեխանիկայով, ուզում է խորանալ այդ բնագավառում և համապատասխան գրականություն ձեռք բերելով՝ զբաղվում է ինքնազարգացմամբ:

Տեխնիկական գիտություններին զուգընթաց՝ Պատրիկը շատ էր սիրում նաև գեղարվեստական գրականությունը: Կարդալով մասնավորապես հայ կլասիկ գրողների՝ ազատասիրության ու հայրենասիրության ոգով տոգորված ստեղծագործությունները, դյուրադրաց ու խանդավառ պատանին հոգով ու մտքով աճում էր նվիրական հայրենիքի անձնազոհ պաշտպանության ոգով:

եվ ահա, Պատըիկի միտքը զյուղատնտեսական մեքենայից—տրակտորից ձգտում է դեպի պաշտպանական թռչող մեքենան՝ դեպի սավառնակը։ Նրա մեջ բուռն ցանկություն է առաջ դալիս դառնալ օդաչու։

1930—1934 թվերին նա սովորում և ավարտում է Բաքվի օդաչուական դպրոցը և այնտեղ էլ նշանակվում աշխատանքի, որպես հրահանդիչ իր նոր մասնագիտությամբ։

Բաքվում, իր աշխատանքի վայրում, նա ծանոթանում է իր ապագա կնոջ՝ Վալենտինա Իվանովսա Դենիսովայի հետ և ամուսնանում։ Ծնողներին էլ տեղափոխում է իր մոտ՝ Բաքու, ուր մնում են մինչև 1937 թվականը։

Այնուհետև Պատըիկին իր պաշտոնով տեղափոխում են Մոսկվա, ուր նա աշխատում է օդանավակայանում, ավելի հմտանալով օդաչուական գործի մեջ։

Թե՛ դպրոցը և թե՛ աշխատանքը ավելի ու ավելի են ամրացնում երիտասարդ հայրենասերի նվիրվածությունն իր գործին։

Հայ ժողովրդի զավակը սիրեց մարտական  
սավառնակն այնպիս, ինչպիս ոռւս կտղակը  
սիրում է նժույգը:

\* \* \*

Մարտնչող հայրենասիրությամբ տողոր-  
ված խանդավառ երիտասարդն իր դիր-  
քումն էր, երբ մեր մեծ Հայրենիքի վրա  
արևմուտքում կուտակվեցին ու ամպեր,  
ոլայթեց ահեղ փոթորիկ և ուխտադրուժ ու  
նենդ թշնամին ավաղակարար հարձակվեց  
մեր ազատ ժողովուրդների կյանքի ու եր-  
ջանկության վրա, ժամանակավորապես  
խանգարելով այն:

Քաջարի օդաչուն հանկարծակիի չեկավ,  
երբ պայթեց այս ահեղ ու ավերիչ փոթո-  
րիկը: 1941 թ. օգոստոսին իր կնոջը գրած  
մի նամակից հայտնի է դառնում, որ Գա-  
ղաղյանի համար, իրրև գիտակից հայրե-  
նասերի ու բոլցեիկի, շատ վաղուց պարզ  
էր «պատերազմի անխուսափելիությունը»  
(«Այժմ, թանկադին Վալյա, կհասկանաս,  
թե ինչու ես հաճախ խոսում էի պատերազ-

մի անխուսափելիության և մեր ժամանակավոր բաժանման մասին . . .» — գրել է նա այդ նամակում): Իսկ երբ փաստ դարձավ այն, երբ հիտլերյան արյունածարավ ոհմակները շղթայագերծ հարձակվեցին մեր սրբազն Հայրենիքի սահմանների վրա, Պատրիկ Գաղաղյանը կազմ ու պատրաստ դաշվ իրեն:

Գաղաղյանի մարտական կյանքի մասին վառ պատկերացում է տալիս նրա օրագիրը<sup>1</sup>, որից էջեր են հրապարակված «Սովե-

<sup>1</sup> Ի դեպ նկատենք, որ Գաղաղյանը սովորություն ուներ մինչպատերազմյան տարիներին էլ (ըստ տեղեկությունների՝ դեռ Նախիջևանի տրակտորիստների կուրսերից սկսած) օրագրություններ անելու: Մուկվայում եղած ժամանակ նա իր մոտ է ունեցել նախորդ տարիների օրագիրները, որ շաբունակել է նա Հայրենական պատերազմի հենց առաջին օրվանից: Իր մարտական թուիչքներից մեկի ժամանակ՝ 1941 թ. հուլիսի 4-ին, ոչնչանում է նախորդ օրերին գրի առածը, բայց նա հետեւյալ օրն իսկ վերականգնում է նախորդ օրերինը և այնուհետեւ օրեցօր շաբունակում այն մինչև իր մահը:

Հուլիսի 5-ի օրագրության սկզբում փակադե-

տական գրականություն» ժուռնալի 1942  
թվի մայիս-հունիսյան դրքում:

Գաղաղյանի օրագիրը, որն իրենից շատ  
հասարակ մի սովորական ծոցատետը է, ոչ  
միայն ինքնակենսագրական դոկումենտ է,  
այլև ընդհանուր հասարակական նշանակու-  
թյուն ունի:

Այդ դոկումենտը գեղարվեստական ար-  
ժեք էլ ունի և կարդացվում է լարված հե-  
տաքրքրությամբ: Նա ընթերցողին ներ-  
շընչում է նվիրական զգացմունքներ ու վեհ  
գաղափարներ:

Օրագրում ամփոփված է հեղինակի մար-  
տական կյանքը Հայրենական պատերազմի  
առաջին երեք և կես ամսվա ընթացքում,  
այն է՝ 1941 թ. հունիսի 22-ից՝ պատե-  
րազմի առաջին օրվանից, մինչև նույն  
թվի հոկտեմբերի 10-ը ներառյալ, որից հե-  
տո օրագրություններն ընդհատվել են:

բում ասված է. «5. 7. 41 թ. (Այսպես ուրեմն,  
սկսում եմ նորից գրել իմ օրագիրը, որովհետև մինչև  
օրս գրածներս երեկ ոչնչացան աղետի ժամանակ...)»:  
Օրագրությունները նա կատարել է ուսուերեն:

Օրագիր-ծոցատետրի վերջում Գաղապահ-  
յանն արելէ զանազան աղյուսակաձև նշում-  
ներ իր կատարած թռիչքների քանակի և  
մարդուտների մասին։ Այստեղից էլ իմա-  
նում ենք, որ նա իր օդաչուական ամբողջ  
կյանքի ընթացքում 3398 ժամ եղել է օդում,  
թռիչքի մեջ։

Օրագրից իմացվում է, որ իր առաջին  
մարտական թռիչքները Գաղապյանը կա-  
տարել է իրենց գնդի, նրա իսկ վկայու-  
թյամբ՝ շատ խիզախ ու հմուտ հրամանա-  
տարի առաջնորդությամբ և հետո միայն  
ինքը առաջադրանքներ է ստացել ինքնու-  
րույնաբար զեկավարելու սավառնակների  
օղակի թռիչքը հակառակորդի հարձակվող  
զորքերի վրա։

Ահա թե ինչ է գրել Գաղապյանն իր և  
իր ընկերների առաջին մարտական թռիչքի  
մասին, որի ընթացքում նրանք հանդես  
են բերում սովորական օդաչուներին հա-  
տուկ անվեհեր խիզախություն, նպատակա-  
ուլացություն, կայունություն ու դիմաց-  
կունություն։

«Հունիսի 22-ին և 23-ին։ Ստացանք  
այն ամենը, ինչ անհրաժեշտ էր, և պատ-  
րաստվեցինք մարտի 24-ին թռանք Պրոն-  
ցովկան Օրշայի ուղղությամբ։

«25 հունիսի։ Կատարեցինք առաջին մար-  
տական թոխքը։ Նպատակն էր ոմքակոծել  
հակառակորդի տանկային և մոտոմեխանի-  
կական խոշոր միավորումները կ. շրջանում։  
Մեր իննյակը վարում էր գնդի հրամանա-  
տարը։ Նպատակակետի շրջակայքում թըշ-  
նամու զենիթային հրանոթները կատաղի  
կրակ բացեցին։ Մեկ-երկու ըովե մենք  
սավառնում էինք համատարած կրակի մի-  
ջով։ Ամենուրեք մեր շուրջը պայթում էին  
արկեր։ Մտածում ես, թե ահա մեկն ու մե-  
կին ցած կցցեն։ Բայց գնդի հրամանա-  
տարը հմուտ կերպով մաներում էր և  
արիարար գնում դեսի նողատակակետը։  
Բոլոր սավառնակներն իրենց տեղերումն  
էին, ոչ ոք շարքը չխախտեց։ Թափեցինք  
սումբերը, բայց մի քանիսը ժամանակ չու-  
նեցան իրենց բեռը վայր նետելու։ Այն  
ժամանակ հրամանատարը որոշեց կրկին

դիմել դեպի նպատակակետը և թանգ դնով  
մինչև այստեղ հասցված բեռն անպայման  
նետել ֆաշիստ գաղանների գլխին։ Այդպես  
էլ արինք։ Զենիթային հրանոթների հա-  
րյուրավոր արկերի պայթյունները չխան-  
դարեցին մեղ կատարելու մարտական առա-  
ջադրանքը։

Մենք վերադարձանք բարեհաջող։ Մի-  
այն ավագ քաղղեկ Ուշակովը նպատակա-  
կետի վերևում հենց, կտրվեց շարքից և  
վայր սլացավ։ Մենք նրան համարում էինք  
կորած, բայց մեր վայրէջքից 10 րոպե հե-  
տո հայտնվեց և նա։ Նրա մեքենան 22  
տեղից ծակծկված էր և ձախ մոտոռը փչա-  
ցած, բայց քաշ էր տվել մինչև օդանավա-  
կայանը մի մոտոռով։ Երբեք այնուհետև ես  
այնպիսի ուժեղ զենիթային կրակի չհան-  
դիպեցի, ինչպես այդ օրը։ Բոլոր սավառ-  
նակներն ստացել էին ծակոտներ, բայց  
մնացել էին անվսաս<sup>1</sup>։

1 «Սովետ. գրակ» № 5—6, Էջ 83, 1942 թ. «Էջեր  
լեյտենանտ Պատրիկ Քաղաղյանի օրատետը»։

Այդ առաջին թոփչքից Գաղաղյանը և  
իր ընկերները մեծ փորձ են ձեռք բերում:  
Նրանք խիզախությամբ ճախրում, անցնում  
են անզուսպ զայրույթից կատաղած թշնա-  
մու հրանոթների համատարած կրակի մի-  
ջով, հաջողությամբ կատարելով իրենց  
մարտական առաջադրանքը: «Բազեի աչք  
և առյուծի սիրտ ունեցող մարդիկ, որոնք  
չգիտեն երկյուղ ու տարակուսանք»: Գա-  
ղաղյանը և իր ընկերներն արդարացնում  
են «Պրավդա»-ի այս ընութագրական խոս-  
քերը՝ ասված Հայրենական պատերազմի  
առաջին հերոսների համար, որոնց շարքումն  
է եղել և հայ ժողովրդի արժանավոր  
դավակը:

Ծանր փորձությամբ կատարված այդ  
առաջին թոփչքից հետո Գաղաղյանը հու-  
նիսի վերջերին մասնակցում է երեք նոր  
թոփչքների ևս, որոնց ընթացքում նա  
մարտական քննություն է բռնում հետա-  
գայում ինքնուրույնաբար կատարելու բարդ  
մարտական առաջադրանքներ:

Հետևյալ գրառումները վերաբերում են

այդ թոփչքներին, որոնք շատ ավելի հաջողությամբ ու ավելի անվտանգ են անցնում, քան առաջինը:

«26 հունիսի: Մեր մարտական թոփչքն անցավ առանց որևէ դժվարության: Այդ օրը վերահաստատվեցինք Բ. քաղաքում:

«28 հունիսի: Ռմբակոծեցինք թշնամուտանկերը գետանցի մոտ: Թշնամու գենիթային հրանոթները շատ թույլ էին գործում:

«30 հունիսի: Ռմբակոծեցինք հակառակորդի մոտոմնխանիկական զորամասերը Բոբրույսկ քաղաքում, գետանցի վրա: Զենիթային հրանոթները թույլ էին գործում: Կովի բռնվեցինք թշնամու կործանիչների հետ. սավառնակային թեթև տեսակի հրանոթի արկից փչացավ էլերոնների զեկավարման սարքը: Սավառնակը պահելով երկու մոտոռներով ու արիմերներով՝ իջա Մոգիլեվ քաղաքում:

«Հրամանատարությունը ջերմ ողջունեցինձ, մանավանդ որ ինձ խորտակված էին համարել: Այստեղ իմ սառնարյունությունը

և սավառնորդելու տեխնիկայի արվեստը  
փրկեցին սավառնակը և անձնակազմը գերի  
ընկնելուց, որովհետև՝ տառացիորեն ֆա-  
շիստների քթի տակով անցա, քանի որ  
սավառնակը նպատակակետի վրա խորը պա-  
րուրածէ թոփչքով իջավ մինչև 150—200  
մետր:

A 6252  
4968

Այս հաջողությունը մեծ չափով ամրաց-  
րեց իմ հավատը գժվար գրությունից դուրս  
դալու հնարավորության նկատմամբ: Այս  
դեպքի մասին ես գրեցի Հրաչին»<sup>1</sup>:

Գաղաղյանի օրագրում այնուհետև նկա-  
րագրված է նրա հերոսական մարտական  
կյանքի ամենանշանակալից օրը՝ հուլիսի  
4-ը: Այդ օրվա թոփչքով է, որ հայ ժողո-  
վը թևավոր զավակը դյուցաղնական  
սխրագործություն է կատարում և հավիտե-  
նական փառք նվաճում իր համար՝ ի պա-  
տիվ իր մայր ժողովրդի:

Այդ օրվա թոփչքից մեկ օր առաջ, հու-  
լիսի 3-ին, նա լսել էր Հայրենական պա-

<sup>1</sup> Հրաչը—Պատրիկի եղբայրը, որն այն ժամա-  
նակ նույնպես գործող բանակումն էր, իբրև բժիշկ:

տերազմի մեծ զորավարի պատմական ռա-  
դիոնառը, ուղղված սովետական ժողովրդին՝  
արյունաբրության խտադրութ թշնամու, ֆա-  
շիստական Գերմանիայի դեմ սկսված հայ-  
րենական ազատագրական պատերազմի  
մասին։ Պատրաստվելով նոր մարտական  
թռիչքի, նրա ականջին ու հոգու մեջ դեռ  
հնչում էին սիրելի առաջնորդի՝ հերոսա-  
կանության ոգի ներշնչող խոսքերն այն  
մասին, թե «անհրաժեշտ է, որ մեր շարքե-  
րում տեղ չունենան նվազողներն ու վախ-  
կոտները, պանիկյորներն ու դասալիքները,  
որ մեր մարդիկ պայքարի մեջ չունենան  
երկյուղ և անձնվիրաբար հայրենական ա-  
զատագրական պատերազմի գնան ընդդեմ  
ֆաշիստական կեղեքիչների» և որ համա-  
ձայն Լենինի պատղամի, «սովետական  
մարդկանց հիմնական հատկությունը պետք  
է լինի քաջությունը, խիզախությունը,  
պայքարի մեջ երկյուղ չունենալը, պատ-  
րաստակամությունը ժողովրդի հետ միա-  
սին կռվելու մեր հայրենիքի թշնամիների  
դեմ» (Ստալին):

Հարազատ հոր և իմաստուն առաջնորդի  
այդ խոսքերին, ահա, հայ ժողովրդի զավա-  
կը անմիջապես արձագանքեց իր հուլիսի  
4-ի մարտական անվեհեր թոփչքով։

Նրա այդ նշանավոր թոփչքի նկարա-  
գրությունը գրավում է իր օրագրի մոտ մի  
քառորդ մասը։ Անհրաժեշտ է այն ամբող-  
ջությամբ մեջ բերել այստեղ, մանավանդ  
որ օրագրի այդ հատվածում (ինչպես և  
մյուս օրերի գրառումներում) երեսում է ոչ  
միայն ինքը՝ Գաղաղյանը, այլև իր մար-  
տական ուղեկիցները՝ կրտսեր լեյտենանտ  
Մեդվեդեկը, քաղղեկ Նեպորեդիմցեկ, ըշ-  
տուրման Կոժուխովը և իր ռադիստը՝ կըրտ-  
սեր սերժանտ Վասիլկովսկին, որը Գա-  
ղաղյանի հետ միասին պարզեատրվեց Կար-  
միր Դրոշի շքանշանով։

«5 հուլիսի։ Երեկ գնդի հրամանատա-  
րությունից առաջադրանք ստացա տանել  
սավառնակների մի օղակ ռմբակոծելու Փա-  
շիստների տանկային շարասյունը Կրուպկի  
կայարանի շրջանում . . . Իմ օղակի մեջ  
մտնում էին աջ կողմից կրտսեր լեյտե-

նանու Մեղվեղել, ձախ կողմից՝ քաղղեկ  
Նեպոքեղիմցել . . . : Մենք թռանք առանց  
կործանիչների ուղեկցության:

«Նպատակակետին մատեցանք թիկունքից.  
շոռւրման կոժուխովլը թեքեց սավառնակը  
և ոռւմբերը նետեց իշնամու տանկերի ու  
մոտոյունի մի խոշոր խմբի վրա, միաժա-  
մանակ բացելով գնդույրային կրակ:

«Այդ ժամանակ ևս ես ընկա շարքից՝  
տարված մեր ոմբակը ծության արդյունք-  
ները դիտելով:

«Նույն ըսպեներին . . . թշնամու «Մեսեր-  
շմիդտ—109» սիստեմի 15—18 սավառնակ  
գրոհեցին մեր վրա: Գրոհը հաջողությամբ  
ետ մղվեց: Դեպի ինձ կատարված հենց  
առաջին հարձակման միջոցին իմ սավառ-  
նակի ձախ մոտոռը շարքից դուրս եկավ:  
Ես մնացի մեկ մոտոռով: Լրիվ գաղ տվի,  
սակայն մերոնց հասնել չկարողացաւ: Ինձ  
հետապնդում էին երկու «Մեսերշմիդտներ»  
և գնդակոծում խաչաձև կրակով, ըստ ո-  
րում գնդակոծում էին հրկիդող գնդակ-  
ներով:

«Գնդակները կարկտի առատությամբ  
դիսլում էին կարինի ետևի զբահավոր  
պատին, սիսեռի նման։ Մի վայրկյան ան-  
գամ մտքիցս չէր հեռանում այն, որ կա-  
րող են սպանել իմ ռադիոտին, որը նստած  
էր իմ ետևում։ Եվ իսկապես, մի փոքր  
անց՝ ևս տագնապի ազդանշան ստացա, որ  
նա վիրավորված է, սակայն օգնել չէի  
կարող։

«Մի քիչ հետո, թշնամու գնդակներից  
հրկիզվեց սավառնակի աջ թևի բաքը։ Թևն  
այրվում էր, էլերոնը հալվում։ Այլևս հնա-  
րավոր չէր սավառնակը դեկավարել։ Բարձ-  
րությունը 100—150 մետր էր։ Այդ վիճա-  
կում՝ այրվող սավառնակի վրա, բացի վայ-  
րէջքից՝ այլ՝ որոշում ընդունել չէր կարելի։  
Ներքել համատարած խիտ անտառ էր։ Ես  
մի ըռպե շարունակեցի թռչել. դիմացից՝  
հեռվում, հետապնդվելով հակառակորդի  
կործանիչների կողմից, անցնում էր իմ ըն-  
կերների մի խումբը։ Նպատակակետից 8—  
10 կիլոմետր հեռու իջա անտառի վրա։  
Շատ ծառեր ջարդվեցին, վերջապես մի ու-

Ժեղ ցնցում և սավառնակը կանդ առավ:  
Ցնցումից ճեղքվեց նաև աջ կողմի կենտ-  
րոնական բաքը: Սավառնակը ամեն կող-  
մից պարուրվեց կրակի բոցերով ու ծը-  
խով: Հրեղեն լեզուները լիզում էին իմ  
կարինի ցելյուլոիդյա պատուհանները: Ես  
ինձ անմխաս զգացի, բայց չէի կարող կա-  
րինի դուռը բացել և դուրս թռչել: Ծառե-  
րը սեղմել էին դուռը և նա ոչ մի կերպ  
չէր բացվում: Կենդանի այրվելու վտանգը  
կենտրոնացրեց իմ ամբողջ ուժերը: Վեր-  
ջին ուժեղ հարվածով ես բացի դուռը և դուրս  
ելա: Հեշտությամբ դուրս եկավ նաև շտուր-  
մանը և այրվող սավառնակից հեռանալով,  
սկսեց կապել վերքերը: Վայրէջքի ժամա-  
նակ պատովել էր նրա ճակատն ու քերծ-  
վել էին ոտները:

«Ես անմիջապես վազեցի դեպի ռադիոտը՝  
Կըտսեր սերժանտ Վասիլկովսկին: Նա  
մասնաւու էր կարինի մեջ, փամփուշտի ար-  
եւդների արանքում: Նա ծանր վիրավոր-  
ված էր թշնամու դնդակից: Հաղիվ զուրս  
բերի բոցերի միջից: Խնդրում էր չտանջել

և «վերջ տաշ» իրեն, բայց խիղճս թույլ չէր  
տալիս այդ անելու: Ես նրան մխիթարում  
էի և խոստանում անմիջապես օգնության  
ուղարկել կոլխոզնիկներին, իսկ ինքս չէի  
հավատում, թե մենք փրկված ենք:

«Շուրջը լսվում էր տանկային հրանոթ-  
ների որոտ: Անտառամերձ ճանապարհով  
ընթանում էին թշնամու տանկերը: Գեր-  
մանացիների ձեռքն ընկնելու վտանգն  
առկա էր: Պատրաստում եմ ատրճանակը  
մարտի համար: Վասիլկովսկին խնդրում է  
թողնել իրեն, փրկելու ինքս ինձ. ուզում  
եմ լաց լինել, բայց արցունքներ չկան: Ես  
համբուրում եմ նրան հրաժեշտ տալով, նա  
լիակատար գիտակցությամբ նույնպես գըր-  
կում է իմ վիզը և համբուրում ինձ: Կա-  
պեցի շտուրմանի վերքերը և մի կողմ տա-  
րա, հեռացնելով սրան այսինքն սավաննա-  
կից 500 մետր: Հանկարծ լսվեցին սարսա-  
փելի կրակոցներ, պայթում էին սավառնա-  
կում եղած շիկացած փամփուշտները: Այժմ  
անհրաժեշտ է հեռանայ արտգ, որովհետեւ  
գերմանացիները կարող եին փնտռել մեզ:

շուրջը, բայց չէր կարողացել Մինսկ—Մուկլա ճանապարհը գտնել: Ունենալով քարտեզ, ես ընտրեցի ամենակարճ և ապահով ճանապարհը դեպի Օրշա՝ Պրոնցովկայի միջով: Հասանք Պրոնցովկա, որտեղից ավագքաղղեկ Ուշակովի ռեմոնտի թողած սավառնակով, շտուրմանի հետ միասին, խուզիչ թռիչքով հասանք մեր գունդը:

«Ն գնդի հրամանատարությունն ու ամբողջ անձնակազմը ջերմագին ողջունեցին ինձ՝ ողջ առողջ վերադառնալուս համար: Կոժուխովին անմիջապես ուղարկեցին գոսպիտալ:

«Իմ սավառնակը ես գուրս էի բերել հակառակորդի անմիջական հարվածի տակից: Տեղ հասնելուն պես, մեկ ժամ հետո, Պրոնցովկայում կանգնած մի այլ սավառնակ բերելու համար ուղարկված անձնակազմը գտել էր նրան ամբողջովին այրված:

«Բայց ես ահա կենդանի եմ, անվսաս և պատրաստվում եմ մեկ օր հետո սավառնակով թռչել մեր գորամասը:

Ես գոհ եմ իմ բախտից: Մինչև արյան

վերջին կաթիլը ես կկռվեմ և կտամ կյանքս  
հանուն Սոցիալիստական Հայրենիքի։ Մեր  
գործը — առաջավոր մարդկության գործը՝  
կհաղթանակի։

«Այսպես ուրեմն, երկրորդ անգամ հրա-  
մանատարությունն իմ անունը ջնջեց կո-  
րածների ցուցակից և գրեց կենդանի մնա-  
ցածների ցուցակում։ Երկրորդ անգամ բախ-  
տը ժպտաց ինձ»։

Այդ օրվա՝ հուլիսի 4-ի թոիչքը բախտո-  
րոշ նշանակություն ունեցող դեպք էր խի-  
զախ հայրենասեր երիտասարդի համար, մի  
թոիչք, որը թեև աղետով է վերջանում, սա-  
կայն բաց է անում նրա հերոսական փառ-  
քի ու անմահության ուղին։

Ահա իր այդ նշանավոր թոիչքից հետո,  
նույն օրը՝ հուլիսի 5-ին՝ Գաղաղյանը, օրա-  
գրի սկզբում կատարած մի երկտող նշու-  
մով՝ որոշում է իր օրագրի տնօրինումն իր  
մահից հետո։

«Իմ մահվան դեպքում, — գրում է Գաղա-  
ղյանը, — խնդրում եմ այս օրատետրը հանձ-

նել դումարտակային կոմիսար ընկեր Լավ-  
րովին, որին իր հերթին խնդրում եմ ան-  
պայման հանձնել այն իմ կնոջը՝ Վալեն-  
տինա Խվանովսա Դևնիսովային, որպեսզի  
իմ որդին մեծանալիս կարդա և իմանա, թե  
ինչպես է իր հայրը կռվիլ Սովետական Հայ-  
քենիքի համար, մեր անող սերնդի ապահով  
և երջանիկ կյանքի եւամար: Մեր պատերազ-  
մը գերմանական ֆաշիզմի դեմ արդարացի  
է, և մեր հաղթանակի նկատմամբ ես չնչին  
կասկած անգամ չունեմ»:

Դրանից 5 օր հետո, հայտնի է դառնում  
Գաղաղյանին, որ ինքը և իր ընկերները  
Միության Գերագույն Սովետի կողմից հու-  
լիսի 8-ին պարզեատրվել են շքանշաննե-  
րով՝ ի թիվս Կարմիր Բանակի Ռազմա-  
օդային ուժերի մի քանի տասնյակ հրամա-  
նատարների ու մարտիկների:

Քաջարի օդաչուն անսահման հրճվան-  
քով ու երախտագիտական զգացմունքով է  
լցվում, երբ տեղականում է այդ մասին:  
Եվ իր այդ ապրումները նա արտահայտում  
է նույն օրվա իր օրագրության մեջ:

«10 հուլիսի: Ողջ օրը հանգստանում ենք:  
Զանձրալի է առանց թափքի: Երեկոյան բերին արևմտյան ճակատի թերթը՝ «Կրասնո-  
արմեյսկայա Պրավդա»-ն: Թերթում տպված  
էր Գերագույն Սովետի Հրամանագիրը<sup>1</sup> ինձ  
և իմ ընկերներին Կարմիր Դրոշի շքանշանով  
պարգևատրելու մասին: Խոսք չեմ գտնում  
արտահայտելու իմ շնորհակալության զգաց-  
մունքները պարտիային և սովետական կա-  
ռավարությանն այդպիսի բարձր պարգևի—  
Կարմիր Դրոշի շքանշանի: Թողի իմանան  
թշնամիները, որ ես պետք է ավելի լավ  
կռվեմ՝ դրան արժանի լինելու համար, չէ՞  
որ ես դեռ համարյա ոչինչ չեմ արել:

«Ես ուզում եմ կռվել և կռվել մեր Հայ-  
րենիքի բարօրության համար: Մեր գործն  
արդար է. քանի որ նրանք են հարձակվել

<sup>1</sup> ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության  
1941 թ. հուլիսի 8-ի Հրամանագիրն է դա:

մեղ վրա, ապա ավելի վատ նրանց համար՝  
կազադած ֆաշիստ բարբարոսների համար:

«Ես ոչ մի այլ նպատակ ու ցանկություն  
չունեմ. իմ կյանքում ես հասա իմ բոլոր  
երազանքներին: Այժմ հոգ չի, թե մեռնեմ:  
Բոլոր իմ բարեկամները, ծանոթները և մեր-  
ձավոր սիրելիները գիտեն, որ ես աշխատել  
եմ մեր Սոցիալիստական Հայրենիքի պաշտ-  
պանության համար և որ կյանքս իզուր ու  
անփառունակ չի կորչի:

«Եթե բախտն ինձ ժողովա, ապա ես մի  
ցանկություն էլ ունեմ — հասարակ մահ-  
կանացուի ցանկություն — այն է՝ սեղմել  
ընկեր Ստալինի ձեռքը և նայել նրա աչ-  
քերին, անձամբ տեսնել նրան՝ պարտիայի  
ու ժողովուրդների առաջնորդին»:

Այս խոսքերում մարմնացած է անձնազոհ  
հայրենասերի, Լենինի-Ստալինի մեծ գործի,  
Հայրենական սրբազան պատերազմի աղնիվ  
զինվորի սիրոն ու հոգին:

Հուլիսի 13-ի օրագրության մեջ ասված  
է. «Թռանք մարտական առաջադրանք կա-  
տարելու: Օպերացիան անցավ հաջող: Են-

թարկվեցինք ուժեղ ոմբակոծման։ Զենի-  
թային արկերի պայթյունների միջից դուրս  
եկանք անփորձ։ Առաջին անգամ ես զգացի  
մահն առերես։ Օդում այրվող սավառնակում  
դրությունն այնքան լուրջ չէր»։

Այդ ծանր, վտանգալից թոհչքից անմի-  
ջապես հետո մի ճակատամերձ քաղաքում  
Գաղաղյանը հանդիպում է իր սրտակից  
հարազատներին՝ կնոջն ու որդուն, հանդի-  
պում, որը հրճվանքով է լցնում անվեհեր  
մարտիկի սիրտը։ Նրան նոր ուժ ու եռանդ  
է ներշնչում մանավանդ այն, որ իր կինն  
առույգ ու լավ տրամադրությամբ է համակ-  
ված։ Նա իր դյուցազնասիրտ ամուսնուն  
դիմավորում է արժանավայել կերպով։

«14 Խուլիսի։ Բ. քաղաքում ենք։ Գտա  
կնոջս և երեխայիս։ Ապրի Վալյան. Նա իրեն  
պահում է առույգ ու լավ։ Բաժանվեցինք  
իրարից։ Ռվ գիտե, գուցե ընդմիշտ։ Պատե-  
րազմն անողոք է»։

Սիրելի կնոջից ու սիրասուն որդուց  
«գուցե ընդմիշտ» բաժանվելու այդ ծանր  
կանխազգացումը, սակայն, երկար չի տան-

ջում Գաղաղյանին, որի միտքն ու հոգին  
տմբողջապես կլանված էր մի նվիրական  
ցանկությամբ՝ ահեղ թշնամու դեմ կռվելու,  
նրան հաղթելու ցանկությամբ ու վեհ զի-  
տակցությամբ, մանավանդ, որ նույն օրը,  
զորամաս վերադառնալիս նա լսում է «Լավ  
տեղեկություններ դերմանական զորքերի  
թիկունքում կատարված մեծ ավերտծու-  
թյունների և ճակատում նրանց զորքերի  
նեղ վիճակի մասին»:

Գաղաղյանի օրագրից տեղեկանում ենք,  
որ նա իր մարտական խմբի հետ հուլիսի  
21—23-ը եղել է Մոսկվայում՝ «նոր նշա-  
նակում ստանալու համար»:

Հուլիսի 23-ի օրագրության մեջ ասված  
է. «Մոսկվայից մեկնեցինք դեպի նշա-  
նակված վայրը, դեպի հարավ»:

Այնուհետև Գաղաղյանը, ինչպես ինքն է  
ասում, իր «գրուպպայի հետ» եղել է այդ  
նոր վայրում «մարտական վերապատրաստ-  
ման» համար, կատարել «թոփչքներ զանա-  
գան տիպի սավառնակներով»:

Բայց հաջողություններից հարբած և

ավելի ու ավելի լրբացած թշնամին օրեցօր  
ավելի էր գաղաղում իր կատաղի չարության  
և դեպի սովետական ժողովուրդն ունեցած  
իր ժանտ ատելության մեջ։ Թշնամու կա-  
տաղի չարության, մոլեգնության սարսռե-  
ցուցիչ արտահայտությունն էին այն ան-  
լուր գաղանություններն ու բարբարոսու-  
թյունները, որ կատարում էր նա ժամանա-  
կավորապես օկուպացիայի ենթարկված սո-  
վետական շրջանների խաղաղ բնակչության  
նկատմամբ։ Այդ ամենի մասին հաղորդում  
էին թերթերը, որոնց ընթերցումն անհուն  
ցասումով ու զայրույթով էր լցնում բոցա-  
շունչ հայրենասեր օգաչուի սիրտը և ան-  
խնա վրեժինդրության մղում։ Հուլիսի 26-ի  
օրագրության մեջ ասված է.

«... Կարդում եմ թերթերում Փաշիստ-  
ների անասելի գաղանությունների մասին,  
արյունս եռում է, ուզում եմ շուտ նորից  
դեպի մարտ թռչել։ Պետք է վրեժ լուծել  
բոլոր խոշտանդված և անարդված կանանց  
համար»։

Հուղիչ է օգոստոսի 18-ի օրագրությունը,

որ վերաբերում է իր առաջին ինքնուրույն  
դիշերային թոփչքին:

«18 օգստոսի: Իմ առաջին ինքնուրույն  
դիշերային թոփչքը: Դա մի նոր հաղթանակ է  
ինձ համար: Եվ այդ հաղթանակը ես նվի-  
րում իմ որդուն, փոքրիկ Ռուբենին:  
Նա ուղիղ երեք տարեկան է: Այդ հա-  
սակից արդեն ականատես է պատերազմի:  
Երանի գիտենայի՝ ինչ է լինելու նրա վի-  
ճակը: Այժմ պատրաստվելով նորանոր թը-  
ռիչքների, ես մտածում եմ մեր հաղթանա-  
կի և իմ որդու մասին: Կյանքում ոչ մի բան  
մարդուն այնքան երջանկություն չի պատ-  
ճառում, որքան հաղթանակի հպարտ զգա-  
ցումը: Հաղթանակ ամեն գործում և ամե-  
նուրեք—դա կատարյալ երջանկություն է:  
Մեր առաջ դեռ շատ գժվարին պայքար կա:  
Ես վստահ եմ, որ կտեսնեմ մեր կատարյալ  
հաղթանակը ֆաշիզմի հանդեպ: Կաշխատեմ  
է՛լ ավելի մեծ եռանդով մեր հաղթանակի  
համար, մեր խաղաղ հանդիպման համար  
ընտանիքի հետո:

Իր մարտական կյանքի նոր էտապի

սկիզբը նշանավորող գիշերային այդ առաջին թոփչքից անմիջապես հետո, Դազաղյանը մի հուղիչ նամակով իր հաղթանակի ապրումները և խոհերը հաղորդում է կնոջն ու փոքրիկ որդուն, թեև նրանցից վերջինը՝ երեք տարին դեռ նոր լրացրած որդին, միշտյան տարիներ հետո կկարողանա իմանալ ու դիտակցել իր դյուցազն հոր սխրագործության նշանակությունը և նշանակությունն այն մտքերի ու գաղափարների, որ օդաչու հայրն արտահայտել է այդ նամակում:

### «Սիրելի Վալյա և Ռուբիկ.

Տխրում եմ առանց ձեզ, բայց Հայրենիքի պաշտպանության պարտքն ինձ ստիպում է ժամանակավորապես մոռանալ ձեզ:

«Այժմ, թանկագին Վալյա, կարծում եմ կհասկանաս, թե ինչու ես հաճախ խոսում էի պատերազմի անխուսափելիության ու մեր ժամանակավոր բաժանման մասին... Եսկ դու անտեղի վիրավորվում էիր, որ իզաւը փչացնում եմ տրամադրությունը: Ոչինչ, սիրելիս, ոլատերազմը կարող է եր-

կարատն լինել ու պահանջել մեծ զոհեր սակայն, եթե ողջ մնանք, ապա իմացիր, որ առաջվանից շատ ավելի լավ կապրենք:

«Պատերազմի կապակցությամբ առաջացած դժվարություններից մի՛ վախենա: Իրերը, որ կորցրել ես էվակուացիայի ենթարկվելիս, մտահան արա: Գույքը միշտ էլ կարելի է ձեռք բերել, կարեռը կյանքն է»:

Այնուհետև Գաղաղյանը խոսում է իր որդու պահպանման ու ապագայի մասին:

«Աշխատիր ինչ գնով ու ինչ պայմաններում էլ լինի, պահպանն ինձ համար իմ սիրելի զավակին . . . Երբ Ռուբիկը մեծանա, թող անպայման օդաչու դառնա: Նրա ամեն քմահաճույքները մի՛ կատարիր, վարժեցրու չարքաշ կյանքի, դրա համար ես քեզ շնորհակալ կլինեմ:

«Այս գիշեր ես բոլորովին ինքնուրույն թոփչք կատարեցի, զա ևս մի հաղթանակ է: Այդ հաղթանակը ես նվիրում եմ Ռուբիկին, չէ՞ որ այսօր լրանում է նրա ծննդյան երրորդ տարին . . . Այս, եթե իմանայի ինչպէս է դասավորվելու նրա կյանքը. արդյոք

իմ պես... իսկ ես հինգ տարեկան հասակից որբ եմ մնացել... Այժմ պատրաստվում եմ մարտական թռիչքի ու մտածում տղայիս մասին, որն աշխարհում ամենից թանկագինն է ինձ հտմար:

«Միայն հաղթանակի զգացմունքն է լցնում կյանքը: Պայքարը դժվարին է, բայց չգիտեմ ինչու, համոզված եմ, որ անպայման տեսնելու եմ մեր հաղթանակը ֆաշիզմի դեմ: Կաշխատեմ է՛լ ավելի լարված՝ հանուն մեր հաղթանակի, հանուն երջանիկ կյանքի...»

«...Եթե ես չգամ, կարող է շուտով շորերս ստանաք... Խնդրում եմ շորերիս վրա չսպաք... միիթարվեցեք նրանով, որ Հայրենիքիս համար եմ զոհել կյանքս»:

Հետեւյալ օրվա (օգոստոսի 20) օրագրության մեջ Գաղաղյանը նշում է, որ այդ օրն ավարտեց «գիշերային թռիչքների նախապատրաստումը» և որ ինքն իրեն «լավ է զգում ու վստահ է գիշերային թռիչքների բարեհաջող վերջավորությանը»:

Այնուհետև Գաղաղյանը մինչև հոկտեմբերի 1-ը կատարել է մի քանի մարտական թոփչքներ, ըստ որում ամեն անգամ մի քանի օր դադար տալով՝ պատրաստվել նոր թոփչքի։ Հոկտեմբերի 1-ի օրագրությունից երեսում է, որ Գաղաղյանը նորից տեսնվել է իր կնոջ ու որդու հետ և գնացքով նրանց ուղարկել հոք մոտ՝ Երևան։

Օրագրում վերջին գրառումը կատարված է հոկտեմբերի 10-ին, երբ նա դարձյալ իր էսկաղրիլիայի տնձնակազմով պատրաստվելիս է եղել ճակատ մեկնելու և անհամբեր սպասել նոր մարտական թոփչքների։

Այդ վերջին գրառումը հենց սկզբից արտահայտում է այն մեծ տաղնապը, որ ապրում էր անձնազոհ հայրենսասերը թշնամու առաջխաղացման ազդեցությամբ։

Բայց մերոնց ժամանակավոր նահանջի առաջացրած կսկիծը ոչ թե հուսահատություն էր առաջացնում նրա մեջ, այլ հաղթանակի հավատով թշնամուն դիմադրելու պատրաստակամություն էր ամրացնում, եւ ավելի վառում Հայրենիքի հանդեպ իր պայ-

քարի գիտակցությունը, հանուն հաղթանակի մեռնելու նվիրական զգացումը:

«10 հոկտեմբերի: Երեկ լսեցինք Օրյոլը թողնելու մասին: Երեկվանից սիրոս ցավում է: Մինչև կես գիշեր չքննցի: Առավոտյան գլուխս ցավում էր: Ե՞րբ պետք է վերջանա այս մարտական պատրաստությունը: Համբերությունս հատնում է, ե՞րբ պետք է մեկնենք ճակատ: Այնտեղ խիղճս գոնե հանգիստ կլինի, որ Հայրենիքիս այս ծանր ժամին ես անմիջականորեն գտնվում եմ կովի մեջ...»:

Հոկտեմբերի 10-ից հետո ընդհատված է օրագիրը: Դրանից 8—9 օր անց հայտնի է դառնում, որ խիղախ օդաչուն հերոսաբար զոհվել է մարտական թոփչքի ժամանակ:

Ինչպես նրա առաջին սխրագործությունն ու կարմիր Դրոշի շքանշանով պարզեցածը վելը, նույնպես և հերոսական մահն արձագանք գտավ մեր պոեզիայում:

Իմ ժողովրդի անբասիր ցաման ամպերից պոկված  
Մի գոռ շանթ էր նա, ահեղ մի կայծակ ոսոխի  
համար,

Եվ ահազդուրդ հարձակումներից նրա խոյլնթաց,  
Քանի թշնամի ընկան գիտապաստ ու կայծակնահար:  
Եվ մինչ թշնամին նզովում էր այդ արծվին  
անվեճեր,  
իմ հայրենիքում նրա բոցանուն համբավը էր  
թնդում,  
Նրա սիրության տաղն էին երգում գուսանները մեր,  
Ու նրա սերն էր ամեն աչքի մեջ, ամեն մի սրառմ:  
...Ամեն օդաչու կովի գնալիս իր ջերմ կըծքի մեջ  
կյանքի պիս անմահ զոհված ընկերոջ ավյունն է  
տանում:  
Զոհված զինվորը մեր հայրենիքի պարծանքն է  
անշեջ,  
Հրճվում ենք հիմա մենք նրա փառքով և  
հպարտանում:

Նվիրում է այս տողերը խիզախ օդա-  
չուի հիշատակին բանաստեղծուհի Աղամինի:  
Գաղաղյանի հերոսական կերպարը մար-  
տընչող հայրենասերի վառ օրինակ է մեր  
ողջ աճող սերնդի համար:

**Армянский Филиал Академии Наук СССР**

---

Боевые подвиги сынов Армении

А. АСАТРЯН

Старший лейтенант

**ПАТРИК ГАЗАЗЯН**

(На армянском яз.)

Изд. Армфар. Ереван, 1943

Վ. 00429, պատվեր 46, տիրաժ 4000.

Ստորագրված է տպելու 25 փետրվարի 1943 թ.

---

ՆԳՁԿ Տնտրաժնի տպարան, Երևան.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0042074

[154]

Գիւլ 1 Ռ.

A  $\frac{I}{6752}$

Արքա